ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

«Կիսամյակային քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը, պաշտպանությունը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպելու ժամանակավոր կարգը» և «Հյուսիսային համալսարանում առկա և հեռակա ուսուցման ձևերով ընթացիկ և ամփոփիչ գիտելիքների ստուգման ժամանակավոր ընթացակարգը» հաստատելու մասին

30.04.2020թ. Թիվ ԱԴ-1

Առաջնորդվելով Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 45-րդ կետի 12-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի հանրապետությունում կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում 2020թ. ապրիլի 28-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության տարածած հայտարարությունը, Համալսարանում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով շրջանավարտների 2019-20 ուստարվա կիսամյակային քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը և պաշտպանությունը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել, որ՝

1.1. Համալսարանում բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրերով շրջանավարտների 2019-20 ուստարվա երկրորդ կիսամյակի կիսամյակային քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը և պաշտպանությունը կազմակերպվելու են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ առցանց, համաձայն սույն հրամանով հաստատված «Կիսամյակային քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը, պաշտպանությունը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպելու ժամանակավոր կարգ»–ի:

1. 2.ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համաձայնեցված առանձնահատուկ դեպքերում հնարավոր է նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը կազմակերպել նաև առկա ուսուցմամբ նախատեսված ընթացակարգերով և հաղորդակցության ձևաչափով, պահպանելով համավարակի կանխարգելման ընդհանուր կանոնները:

2. Հաստատել՝

2.1. «Կիսամյակային քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը, պաշտպանությունը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպելու ժամանակավոր կարգը»՝ համաձայն Հավելված 1–ի:

2. 2.«Հյուսիսային համալսարանում առկա և հեռակա ուսուցման ձևերով ընթացիկ և ամփոփիչ գիտելիքների ստուգման ժամամակավոր ընթացակարգը»՝ համաձայն Հավելվածի 2–ի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և տարածվում է 201920 ուստարվա երկրորդ կիսամյակում քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության ու պաշտպանության գործընթացների վրա:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական վարչության պետ Ա.Սարգսյանին, վերահսկողությունը՝ ուսումնահետազոտական և բարեփոխումների գծով պրոռեկտոր Լ.Ֆլջյանին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՌԵԿՏՈՐ

Մ.ՄԱԿԻՉՅԱՆ

Հավելված 1

Հյուսիսային համալսարանի ռեկտորի

30.04.2020 թիվ ԱԴ-1 հրամանի

Ժամանակավոր կարգ

կիսամյակային քննությունները, ավարտական և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը, պաշտպանությունը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպելու

1. Համալսարանում կիսամյակային քննությունների կազմակերպումը և գնահատումը իրականացվում է դասավանդող դասախոսի կողմից նախընտրած՝ «Հյուսիսային համալսարանում ս.թ. մարտի 23-ից մինչև ապրիլի 14-ը հանրակրթական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով լսարանային ուսումնական պարապմունքները տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպելու վերաբերյալ» Համալսարանի ռեկտորի 19.03.2020թ. թիվ 1 հանձնարարականով նախատեսված առցանց հաղորդակցության որևէ ձևաչափով, և գնահատվելու է սույն հրամանով հաստատված՝ «Հյուսիսային համալսարանում առկա և հեռակա ուսուցման ձևերով ընթացիկ և ամփոփիչ գիտելիքների ստուգման ժամանակավոր ընթացակարգ»–ով:
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կիսամյակային քննությունների ընթացքի և գնահատման էլեկտրոնային տվյալները պահպանվում են դասախոսի մոտ, այդ թվում, քննության ավարտից հետո անմիջապես դրանք փոխանցվում են համապատասխան դեկաններին, ըստ պատասխանատուների հետագայում դրանք արխիվացնելու, այդ թվում, անհրաժեշտ տվյալները փաստաթղթավորելու պարտավորվածությամբ:
3. Սույն կարգով նախատեսված միջոցառումների շրջանակներում ուսանողի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միջև առցանց տեսաձայնակապի միջոցով հաղորդակցությունը ընդունվում է որպես համարժեք առկա ֆիզիկական հաղորդակցությանը:
4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց նախապաշտպանությունը, պաշտպանությունը, գնահատումը և

գնահատման բողոքարկումը, բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված՝ տեխնիկական խնդիրների առնչությամբ ուսանողի կողմից բողոքարկման դեպքերի, համապատասխանաբար իրականացվում է սույն հրամանով նախատեսված պայմանների պահպանմամբ և Համալսարանի գիտական խորհրդի 2019 թ. ապրիլի 18–ի h.31 նիստում հաստատված «Հյուսիսային համալսարանում ավարտական աշխատանքի պատրաստման, պաշտպանության և գնահատման» և «Հյուսիսային համալսարանում մագիստրոսական թեզերի պատրաստման, պաշտանության և գնահատման» կարգերի համապատասխան:

5. Ավարտական աշխատանքների և մագիստորսական թեզերի առցանց նախապաշտպանությունը ամբիոնների կողմից հաստատված ժամանակացույցի շրջանակներում կարող է իրականացվել ուսանողի և ամբիոնի միջև առցանց տեսաձայնակապի միջոցով: Նշված կապի անհնարինության և կամ ուսանողի և ամբիոնի համատեղ համաձայնությամբ նախապաշտպանություն կարող է տեղի չունենալ: Այս դեպքում նախապաշտպանության տեղի չունենալը հիմք չէ աշխատանքը արտաքին գրախոսության չհասցեագրելու և պաշտպանության չթույլատրելու համար:

6. Ավարտական աշխատանքների և մագիստորսական թեզերի առցանց պաշտպանությունն իրականացվում է դեկանների կողմից կազմված անհատական ժամանակացույցերի համաձայն, որտեղ նշվում է յուրաքանչյուր ուսանողի պաշտպանության կոնկրետ օրը, ժամը, որպեն:

7. Պաշտպանության ժամանակ առցանց հաղորդակցության գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական կարգավորումներ և խորհրդակցություն իրականացնելու և տեխնիկական խնդիրներով պայմանավորված հնարավոր բողոքարկումներն ուսումնասիրելու համար Համալսարանի համապատասխան աշխատակիցների կազմից ռեկտորի հրամանով կազմվում է տեխնոլոգիական հարցերով աջակցության փորձագիտական խումբ, յուրաքանչյուր քննասենյակում ապահովելով առնվազն մեկ փորձագետի ներկայություն:

8. Այն դեպքում, երբ արտաքին գրախոսության հասցեագրված աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի վերաբերյալ արտաքին գրախոսություններ հնարավոր չի լինում հավաքագրել, գրախոսության կազմակերպման պատասխանատու ստորաբաժանումը ամփոփիչ

ատեստավորման հանձնաժողովին է ներկայացնում համապատասխան տեղեկանք, որտեղ նշվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից աշխատանքը գրախոսության ներկայացնելու ժամկետը, գրախոսության հասցեատերը, հասցեատիրոջ կողմից պատասխան չլինելու մասին տեղեկություն: Այս դեպքում արտաքին գրախոսության բացակայությունը հիմք չի հանդիսանա աշխատանքը պաշտպանության չթույլատրելու համար: Այն դեպքում, երբ արտաքին գրախոսությունը կներկայացվի էլեկտրոնային տարբերակով, առանց պաշտոնական էլեկտրոնային ստորագրության, մինչ գրախոսությունը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացնելը գրախոսության կազմակերպման պատասխանատու ստորաբաժանումը գրախոսության տպված տարբերակի վրա կմակագրի, որ հաստատում է գրախոսության հեղինակի ինքնությունը:

9. Ավարտական աշխատանքների և մագիստորսական թեզերի առցանց պաշտպանության ժամանակ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը պետք է ապահովված լինի առնվազն երկու հեռահաղորդակցության օպերատորի համացանցային կապով և առնվազն երկու համակարգիչներով, որպեսզի կապի խզման արդյունքում ալյընտրանքի հնարավորություն լինի: Նման տեխնիկական հագեցվածության նպատակահարմարության վերաբերյալ դեկանները պաշտպանությունից առնվազն երեք օր առաջ հնարավորության դեպքում խորհրդատվություն են տրամադրում ուսանողներին:

10. Այն դեպքրում, երբ նախապես հաստատված ժամանակացույցի շրջանակներում ուսանողը չի կարող առցանց հաղորդակցվել տեխնիկական խնդիրներով պայմանավորված և կամ արդեն իսկ կայացած հաղորդակցությունը ընդհատվում է, հանձնաժողովը շարունակում է ուսումնասիրել աշխատանքը, զուգահեռ տեխնոլոգիական աջակցության փորձագետը փորձում է կապ հաստատել ուսանողի հետ: Կապ հաստատելու պարագայում ճշտվում է հնարավորությունը նախատեսված ժամանակացույցում պաշտպանությունը շարունակելու վերաբերյալ, կամ քննարկվում է ընդհանուր պաշտպանությունների ավարտից հետո 10 րոպե տևողությամբ պաշտպանություն կազմակերպելու հարցը:

Պաշտպանությունը շարունակելու հնարավորության դեպքում փորձագետը այդ մասին տեղեկացնում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին: Ուսանողի հետ կապ հաստատելու անհնարինության և կամ վերջինիս կողմից լրացուցիչ ժամանակահատվածում պաշտպանություն իրականացնելու ոչ պատրաստակամության դեպքում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը հրապարակային պաշտպանության համար համապատասխան կարգերով նախատեսված՝ ուսանողի զեկույցի համար հնարավոր 40 միավոր գնահատականը չի ընդգրկում ընդհանուր գնահատման մեջ, որի արդյունքում առավելագույն գնահատական է դառնում 60 միավորը:

11. Առցանց պաշտապնության ժամանակ հնարավոր տեխնիկական խնդիրների պարագայում պաշտպանությունը չձախողելու համար պաշտպանության օրից առնվազն երեք օր առաջ ուսանողները ամբողջական աշխատանքի էլեկտրոնային տարբերակը մուտքագրում են այդ նպատակով ըստ մասնագիտությունների Համալսարանի պաշտոնական կայքում տեղակայված էլեկտրոնային փոստերի հասցեներով, որոնց հասցեագրված ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը խմբավորվում են համապատասխան դեկանների կողմից, ապահովելով պաշտպանության օրը դրանց անկորուստ, անվնաս, այդ թվում, մագիստրոսական թեզի վերաբերյալ գրախոսի կարծիքի, ղեկավարի կարծիքի, առաջադիմության միջին որակավորման գնահատականի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին:

12. Այն դեպքում, երբ աշխատանքները և թեզերը նախապես չեն հասցեագրվում վերոնշյալ փոստերի հասցեներով, և փաստացի պաշտպանության օրը հնարավոր չի լինում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել ավարտական աշխատանքը և կամ մագիստրոսական թեզը, այս դեպքում համարվում է, որ ուսանողը ավարտական աշխատանքի և կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը չի ներկայացել:

13. Առցանց պաշտպանության հրապարակայնությունն ապահովելու նպատակով պաշտպանությանը առցանց ներկա գտնվելու համար շահագռգիռ անձինք պետք է պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ մասնակցության առցանց դիմում ներկայացնեն Համալսարանի

պաշտոնական փոստի հասցեով, նշելով մասնակցի անձնական տվյալները (անուն, ազգանուն, կրթություն, բնակության վայր, հեռախոսահամար), ընդգրկվածության շարժառիթները: Ուսումնասիրության արդյունքում դիմումատուներին կներկայացվի դեիտորդի կարգավիճակով պաշտպանությանը առցանց ներկա գտնվելու համար համապատասխան էլեկտրոնային ծածկագրեր:

14. Պաշտանության տեխնիկական խնդիրների առնչությամբ ուսանողի կողմից բողոքարկումն իրականացվում է պաշտպանության ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում տեխնոլոգիական աջակցության փորձագետին, պաշտպանության համար կիրառված առցանց հարթակի միջոցով:

    Բողոքարկումը ստանալուց կամ լսելուց հետո փորձագետը անմիջապես ուսումնասիրում է բողոքը և հրապարակում որոշում՝ բողոքարկումը մերժելու, կամ, տեխնիկական խնդիրներով պայմանավորված պաշտպանության գնահատման վրա բացասական ազդեցություն ունեցած հանգամանքների բացահայտման պարագայում այդ ազդեցության չափով գնահատականը վերանայելու առաջարկություն է ներկայացնում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին, որը բողոքարկման գործընթացում համապատասխան կարգերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կայացնում է վերջնական որոշում գնահատականը անփոփոխ թողնելու կամ վերանայելու վերաբերյալ:

15. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ավարտից հետո պաշտպանության ներկայացված աշխատանքների էլեկտրոնային տարբերակները, դրան ուղեկցող էլեկտրոնային նյութերը ենթակա են պահպանման համապատասխան դեկանների պատասխանատվությամբ, մինչ դրանց էլեկտրոնային արխիվացման կամ փաստաթղթավորման վերաբերյալ համալսարանի ներքին կանոնակարգերով նախատեսված պահանջը:

Հավելված 2

Հյուսիսային համալսարանի ռեկտորի

30.04.2020 թիվ ԱԴ-1 հրամանի

Ժամանակավոր ընթացակարգ

Հյուսիսային համալսարանում առկա և հեռակա ուսուցման ձևերով ընթացիկ և ամփոփիչ գիտելիքների ստուգման

Հյուսիսային համալսարանում 2019-2020 թվականի 2-րդ կիսամյակի քննաշրջանը արտակարգ իրավիճակի պայմաններում կազմակերպելու համար Համալսարանի ուսանողների գիտելիքների գնահատման ընթացակարգը ժամանակավորապես իրականացնել՝ առաջնորդվելով հետևյալ դրույթներով.

1. Ուսանողների ընթացիկ և ամփոփիչ քննություններն անցկացնել հանրագումարային քննության միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ամփոփիչ ռեֆերատի արդյունքներով:

1.1. Ուսանողների ընթացիկ և ամփոփիչ քննություններ

1.1.1. Ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ստուգումը կանցկացվի բանավոր հանրագումարային քննության միջոցով՝ հիմնված առարկայական նկարագրերում սահմանված կրթական վերջնարդյունքների վրա:

- Հանրագումարային բանավոր քննության հարցատոմսը բաղկացած է երեք հարցից, որոնցից 2-ը վերաբերում են 1-ին և 2-րդ միջանկյալ քննություններին, իսկ երրորդը՝ ամփոփիչ քննությանը:
- Առաջին երկու հարցերը պետք է իրենց բովանդակությամբ ընդգրկեն ուսումնական նյութի ոչ պակաս քան 40 %-ը՝ կրթական վերջնարդյունքներին համապատասխան:
- Երրորդ հարցն ընդգրկելու է նյութ, որի նպատակն է ստուգել ուսանողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները, նյութի

ոչ պակաս քան 60% ներգրավմամբ՝ վերջնարդյունքներին համապատասխան:

1.1.2. Հյուսիսային համալսարանի ամբիոնները ոչ ուշ, քան քննությունից մեկ շաբաթ առաջ հարցաշարը՝ ստուգված և հաստատված Համալսարանի համապատասխան ամբիոնի վարիչի կողմից, պետք է ուղարկվեն ուսանողներին:

1.1.3. Քննությունից առնվազն 3 օր առաջ Համալսարանի ամբիոնի դասախոսները պետք է խորհրդատվություն իրականացնեն ուսանողների հետ՝ ընթացակարգը ներկայացնելու, ինչպես նաև քննական նյութին առնչվող հարցեր պարզաբանելու համար:

1.1.4. Համալսարանի ամբիոնները հանրագումարային քննությունների համար բացի քննող դասախոսից պետք է ապահովեն ընթերակա դասախոսի ներկայությունը:

1.1.5. Հանրագումարային քննությունների ժամանակացույցը կազմվում և հաստատվում է Համալսարանի ֆակուլտետների խորհուրդներում, այնուհետև դրանք ուղարկվում են Համալսարանի ռեկտորատի քննարկմանը և հաստատմանը /ավարտական կուրսերի կիսամյակային քննությունները կազմակերպվում է մայիսի 15-23-ն ընկած ժամանակահատվածում, իսկ 1-3րդ կուրսերինը՝ հունիսի 1-19-ը/:

1.1.6. Հանրագումարային քննության լուծարքը առկա ուսուցման 1-3-րդ կուրսերի և հեռակա ուսուցման 1-4-րդ կուրսերի ուսանողների համար կազմակերպվում է սեպտեմբեր ամսին: Ավարտական կուրսերի ուսանողների ակադեմիական պարտքերի հանձնման վերջնաժամկետ է սահմանվում ս.թ. հունիսի 1-ը:

- Ուսանողների քննությունների լուծարքները կանցկացվեն Հանրագումարային քննության, մասնակցության գնահատականի ընդհանուր հանրագումարի արդյունքում 40 միավորը չհաղթահարած կամ ամփոփիչ քննության առնվազն 60 տոկոսը չհաղթահարած

ուսանողների համար արդյունքում ընդհանուր անբավարար գնահատական ստանալու դեպքում /41-ից ցածր/:

- Ուսանողները 1-ին լուծարքի ժամանակահատվածում պետք է նույն ձևաչափով հանձնեն բանավոր քննություն, որը կներառի այն միջանկյալ քննության նյութը, որից ուսանողը ստացել է անբավարար գնահատական:

1.1.7. Հաշվի առնելով արտակարգ դրության պայմանները՝ ուսանողների մասնակցության համար 10% կշիռ ունեցող գնահատման համար նշանակվում է առավելագույն /100/ գնահատական բոլոր ուսանողներին:

1.2. Գրավոր ամփոփիչ ռեֆերատ

1.2.1. Ուսանողների ընթացիկ և ամփոփիչ քննության կազմակերպման անհնարինության դեպքում այն կփոխարինվի գրավոր ռեֆերատով՝ տվյալ ֆակուլտետի դեկանի անունով համապատասխան էլեկտրոնային նամակ-դիմումի հիման վրա:

1.2.2. Գրավոր ամփոփիչ ռեֆերատը՝ ամբողջ կիսամյակի ուսումնական նյութի հիման վրա պատրաստված վերլուծական ակնարկ է, որը ներառելու է հետևյալը՝

- նյութի թեմաները և դրանց կարևորությունը մասնագիտական և հետագայում աշխատանքի մեջ կիրառելիության տեսանկյունից՝ յուրաքանչյուր անցած թեմայի վերաբերյալ ուսանողի նկատառումները,
- դասընթացի շրջանակում ինչ մասնագիտական աղբյուրներից է օգտվել ուսանողը գիտելիքներ ստանալու, կարողություններ և հմտություններ ձևավորելու համար, ամփոփ ներկայացնել 2 հեղինակի տեսակետներ և մոտեցումներ,
- որ հարցերն են, որ ըստ ուսանողի ևս կարելի էր ներառել այդ դասընթացի մեջ, որոնք էլ ավելի կնպաստեին մասնագիտական և ընդհանրական գիտելիքների, հմտությունների, կարողությունների և

հմտությունների ձևավորմանը՝ հիմնված կրթական վերջնարդյունքների վրա,

- կուզենա՞ր ուսանողը, որ հետագայում ևս մի քանի դաս անցկավեր իր ՄԿԾ-ի շրջանակում առցանց եղանակով և ինչու: Ինչպես կգնահատեր COVID-19-ի պայմաններում տվյալ դասընթացի անցկացման ձևաչափը, ընտրված մեթոդները և նյութի մատուցման ձևերը: Եզրափակիչ դրույթներ և առաջարկություններ բուհին՝ տվյալ դասընթացն ավելի լավ/հագեցած ավելի շատ գործնական վարժություններով, ինտերակտիվ խաղերով և այլն/:

1.2.3. Ռեֆերատի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 1000 բառը:

1.2.4. Յուրաքանչյուր հարցի համար առավելագույն ծավալը՝ 250 բառ, հարցի կշիռը՝ 25 միավոր:

1.2.5. Ամփոփիչ ռեֆերատից դրական գնահատական ստանալու համար հարկավոր է լիարժեք պատասխանել նվազագույնը 2 հարցի:

1.2.6. Ամփոփիչ ռեֆերատը չհանձնած ուսանողները 1-ին լուծարքի շրջանում կհանձնեն բանավոր քննություն՝ Հանրագումարային քննության ամբողջ ծավալով:

1.2.7. Ամփոփիչ ռեֆերատը չհանձնած ուսանողների համար լուծարքը կանցկացվի ս.թ. սեպտեմբեր ամսին:

2. Ստուգարքներ

2.1. Ստուգարքային արդյունարար գնահատականը բաղկացած է 3 մասից՝

- հաճախումներ - 10%,
- մասնակցություն - 10%,
- ամփոփիչ հարցում -80%:

2.2. Ստուգարքային դասընթացի հաճախումների և մասնակցության համար սահմանել սահմանել 20% միավոր բոլոր ուսանողների համար:

2.3. Ամփոփիչ հարցումը կանցկացվի բանավոր՝ բաղկացած մեկ տեսական և գործնական հարցից, որոնք կանցկացվեն «հարց ու պատասխան ձևաչափով»՝

հիմնված դասընթացի կրթական վերջնարդյուքների վրա: Յուրաքանչյուր հարց /տեսական կամ գործնական/ պետք է ներառի առնվազն 2 ենթահարց: Ուսանողը ստուգարքային դասընթացից դրական միավոր ստանալու համար պետք է պատասխանի առնվազն 2 ենթահարցի: Յուրաքանչյուր ենթահարցի համար սահմանել 25% կշիռ / 25*4=100/:

2.4. Հյուսիսային համալսարանի ամբիոնները ոչ ուշ, քան ստուգարքից մեկ շաբաթ առաջ հարցաշարը՝ ստուգված և հաստատված Համալսարանի համապատասխան ամբիոնի վարիչի կողմից, պետք է ուղարկվեն ուսանողներին:

2.5. Ստուգարքից առնվազն 3 օր առաջ Համալսարանի ամբիոնի դասախոսները պետք է խորհրդատվություն իրականացնեն ուսանողներին՝ ներկայացնելու ընթացակարգը, ինչպես նաև պարզաբանելու ստուգարքի նյութին առնչվող հարցեր:

2.6. Ստուգարքների լուծարքները կանցկացվեն ստուգարքի համար սահմանված ձևաչափով՝ նվազագույն շեմը /41 միավոր/ չհաղթահարած ուսանողների համար:

2.7. Ստուգարք չստացած ուսանողների համար լուծարքը կանցկացվի ս.թ. սեպտեմբեր ամսին:

3. Համալսարանի բակալավրական մասնագիտական կրթական ծրագրերով սահմանված ուսումնական և մասնագիտական, ինչպես նաև մագիստրոսական կրթական ծրագրերով սահմանված գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների պաշտպանություն և գնահատում

3.1. Համալսարանի պրակտիկայի պաշտպանության գնահատականը գոյանում է՝

- ուսանողի օրագրից,
- ուսանողի հաշվետվությունից
- ուսանողի բանավոր ներկայացումից:

3.2. Յուրաքանչյուր ամբիոն կարող է սահմանել պրակտիկայի պաշտպանության այլ ձևեր, ընտրել գրավոր կամ բանավոր անցկացման ձևը՝ նախորոք տեղյակ պահելով Համալսարանի ռեկտորատին պրակտիկայի պաշտպանության անցկացման ամբիոնի տարբերակված ձևի մասին:

3.3. Պրակտիկայի պաշտպանությունը գնահատվում է 100 միավոր, որից՝

- 30 միավոր՝ հատկացվում է կազմակերպությունից պրակտիկայի ղեկավարի գնահատականին, ▪ 10 միավոր՝ հաշվետվությանը,
- 60 միավոր՝ պաշտպանությանը:

3.4. Պրակտիկայի անցողիկ շեմային գնահատական է համարվում 41 միավորը, որից առնվազն 15 միավորը պետք է գոյանա կազմակերպությունից պրակտիկայի ղեկավարի գնահատականից և 20 միավորը՝ պրատկիկայի պաշտպանությունից:

3.5. Պրակտիկայի պաշտպանության ներկայացման համար ամբիոնը սահմանում է սլայդների նվազագույն քանակ և հարցերի նվազագույն քանակ, որոնց ուսանողը պետք է պատասխանի սլայդների միջոցով:

3.6. Պրակտիկայի պաշտպանությունից անբավարար գնահատական ստանալու դեպքում այն կարելի է վերահանձնել լուծարքների համար նախատեսված ժամանակահատվածում:

3.7. Համալսարանի պրակտիկայի պաշտպանությունից անբավարար գնահատական ստացած ուսանողների համար կանցկացվի ս.թ. սեպտեմբեր ամսին: